# ՆՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՎՐԱՅ

առ. Հ. Գ. Նահապետեան

*(Ընդգծուած բառերը՝ սխալ ձեւը կը ներկայացնեն. փակագծի մէջ գրուածն՝ ուղիղ ձեւը)։*

(տպ. վնն. 1889)

Ա. Էջ 1 տող 24. — *«Ցիւրաքանչիւր իւր գլուխս». — Ջնջել իւրը՝ որ կրկնագրութիւնն է՝ իւրաքանչիւրի վերջին վանկին։*

Բ. 11 9. — *«Զի որ առ յապայն և առելոց (= երանելոց) էին»։*

Գ. 12 10. — *«Մինչդեռ վասն այսորիկ զզուէին զնա աներք Նորա, մեռաւ կին Նորա. ազատեալ լինէր Ցուսիկ ի բանէրոյն (= ի Բ. աներոցն)»։ — Երկու աներաց վրայ է խօսքը. «աներք Նորա»։*

Դ. 23 26. — *«Ուժգին հաւատովք և բարձրակայ հաւատովքն» (= բարձրացեալ հաւատոցն կատարմամբ)։*

Ե. 15 16. — *«Ի մի վայր ժողովեալ... զսորա զօր տօնին (= տօնեն) զյիշատակ քաջութեանն ցնծան (= և ցնծան)»։*

Զ. 15 18. — *«Ցազագս մեծի պատերազմին հինին եկելոց». — Պէտք է համաձայնեցնել գոյականին և ածականին հոլովը։*

Է. 15 25. — *«Ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց... և այլոց՝ (բուր) խառնաղանճ բազմութեամբ (= բազմութիւն) անթիւ՝ (բուր) անընակ(արա)ն վաչկատուն զօրութեանց»։*

Ը. 16 14. — *«Եւ խոյս ետ... Խոսրով յիւրմէ եղբարցն (= եղբարէն) նոյն ի Սանէսանայ»։*

Թ. 16 41. — *«Եւ ոչ մի ոչ (= ոք) ապրեցուցանէր»։*

Ժ. 19 4. — *«Ապա հրաման ետ... զնամար (= զանհամար) զօրսն մատենիկ գնդաւն ընդ առաջ նոցա խաղալ հասանել (= խաղացուցանել) ի դիմի հարկանել, արգելուլ զթշնամիսն»։*

ԺԱ. 19 22. — *«Ապա անկանէր»էն յառաջ պակասիլ կը թուի՝ թագաւորին ցաւոց նկարագրութիւնը։*

ԺԲ. 19 30. — *«Ի ձկնատեսանն (ի ձկնատեսանն) արքունի ի վերայ գետակին»։ Հմմտ. էջ 142 տող 28։*

ԺԳ. 21 23, — *«Եւ արքայ կնութիւն (= ի կնութիւն) սիրելւոյն»։*

ԺԴ. 23 13. — *«Քանզի ի տախտակացն խորտակերոցն (= խորտակերոյն) յայտնի երեւէր բերելեացն թաղծութիւն»։*

ԺԵ. 25 30. — *«Իսկ նա պնդեալ վիճէր և ասէր.... զինչ է այն որ զգեցեալն է թագաւորն ի ներքոյ պատմուճանին։ Որ (= Ո՛ր) ի մէջ կացեալ» և այլն։ — Դիտելի է թէ՝ «Որ»էն յառաջ (Մ.) Ցակոբայ խօսքին պատասխանը կը պակսի։*

ԺԶ. 27 19. — *«Եւ ի մահուն իւրեանց զմիաւորութեանն (= ըստ միաւորութեանն) համատարութեանն»։*

ԺԷ. 30 12, — *«... հասանէին յայրարատեան աշխարհն։ Եւ զիշխանսն երկուսին և նոցուն (= երկոցուն) Ծոփացն, յառաջ արձակէին աւետաւորս առ արքայ»։*

digitised by A.R.A.R.@

ԺԸ. 30 21. — *«Սա զհետ հօրն իւրոյ Վրթանայ զառաքելական յաջորդէր» զաթոռ? պակաս է։*

ԺԹ. 30 32. — *«Սուրբ և պայծառ հոգւով... իբրև զախոյեան նահատակ ի տղայութենէ ոխից ընկլանէր (= ոխոցն չկանէր, դէմ կը դնէր) աներևոյթ թշնամւոյն՝ (թուր) յաղթութեամբ սպառնացեալ»։*

Ի. 33 28. — *«Ոչ կարէին ինչ ունել ի մտի ... ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ (= ոմ), և ոչ մի բան, և ոչ կէս բանի» և այլն։*

ԻԱ. 40 32. — *«Ընգերոյ (= ընտրելոյ չարեացն». — Հ. Գ. Ն. կ'ուղղէ կրկնելոյ որ հաւանական չի թուիր։*

ԻԲ. 41 16. — *Եւ դուք զհրէական բարուցն բերէք զօրինակն յանձինս ձեր, սպանութեանցն սովորութեանց գրկուրիւնս (= գկրկնուրիւնս?)։*

ԻԳ. 44 4. — *«Որոց հարեալք (= առ ուռն հարեալ?) զաւանդն հոգևորն պատուի»։*

ԻԴ. 45 14. — *«Տարան ի յազարակն ... որ (= ուր) էր ... յառաջագոյն բնակեալ»։*

ԺԵ. 49 8. — *«Գտանէին զնոսա լոկ ցամաքեալ զկձղացեալ (= զկճղակացեալ) զոսկերս նոցա»։ — Հ. Գ. Ն. ուղղագրէ «կճացեալ». Հ. Կ. Տէր Սահակեան «կոճղացեալ». ըստ իս՝ կճղակացեալ։ Մարմինները ամքած, ցամքած, մորթը միայն ոսկորներու վրայ մնացած ըլլալով, կճղակ դարձեր էին։ — Առաջին սրբագրութիւնը «կճացեալ» խօսք պիտի չվերցնէր, եթէ «բազում» ամք անցած ըլլային և ո՛չ «բազում ամիսք»։*

* * *

---

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## «ՍԵՊՏԵՄԲԵՐ» ԱՄՍՈՅ ԲԱԶՄԱՎԷՊԻ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ


ՍԱՀԱԿԵԱՆ Հ. Կ. Տ. — *Հայերը բիւզանդական գրականութեան մէջ. (Սմբատ Օրբէլեան. Թոռնիկեանց ընտանիքը)* . 385

ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — *«կարծիք» և «կեղծիք»* . . . . . . . 392

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ Հ. Գ. — *Ց. Մանդակունւոյ ճառք* . . . . . 395

ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ. — *Առլահվէրտիները պայազատք կամսարականաց* . . 399

ՊՈՏՈՒՐԵԱՆ Հ. Մ. — *Զգեստ հայ կաթողիկոսին. (քող. պալիոն. նափորտ, եմիփորոն, կոնքեռն, և այլն)* . . 41)


### ԹՂԹԱԿՑ. ՀԱՅԿ. ՃԵՄԱՐԱՆԻ


«ՍԻՍԱԿԱՆ» *անուան ստուգաբանութիւնը*. 394

ՀԻՆ ՀԱՅՈՑ *օրէնքը մարդասպաններու մասին* . . . . . . . 405

ԱՐԱ *փոիւգական դիցաբանութեան մէջ* . 408

ՀԱՅԵՐԷՆԻ *առաջին հոլովը ինչպէս պէտք է ներկայացնել* . . . . 418


### ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ


ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ Հ. Ս. — *Գերմանական գրականութիւն* . . . . 427

ԹՈՐԳՈՄԵԱՆ Տ. Վ. — *Դպրոցական առողջապահութիւն* . . . . 419


### ԱՑԺՄԷՈՒԹԻՒՆՔ


ՀԱՆԴԷՍ *եւրոպական հանդէսներու* . . 406

ՀԱՆԴԷՍ *ազգային հանդէսներու (Արևելք, Բիւզանդիոն, Մանզումէ, Ջանգակ ...)* 423

*Քրոնիկ, այլևայլք, և այլն։*


digitised by A.R.A.R.@